ՀԱՍՏԱՏՎԱԾ Է:

ԵՊՀ ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ
14 թ մայիս 6

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԳԵՎ. ԱՐԱՔԵԼՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՊՀ ԻՄ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված պրակտիկայի գնահատման հարցման (այսուհետև՝ հարցման) կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ԻՄ պրակտիկանտների շրջանում հարցման անցկացման, արդյունքների մշակման և օգտագործման կարգը:

1.2. Հարցումն անց է կացվում «Կրթության մասին» ՀՀ օրենքի, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության, ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգի, ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի (մշտադիտարկման) և պարբերական վերանայման կարգի և ՈԾ-ի պահանջներին համապատասխան և համարվում է ներքին շահակիցների կողմից ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելու և պրակտիկայի արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3. Հարցումը պրակտիկայի գործընթացի բարելավման կարևորագույն բաղադրիչ է, որի անցկացման նպատակն է ստանալ տեղեկատվություն մասնաճյուղի պրակտիկանտների մասնագիտական և անձնային կոմպետենցիաների, պրակտիկ կարողությունների, տեսական գիտելիքների և ժամանակակից մեթոդների տիրապետման, պրակտիկայի գործընթացի կազմակերպման, տևողության, վայրի, պրակտիկայի ղեկավարի աշխատանքների վերաբերյալ:

2. Հարցման անցկացումը

2.1. Հարցումն անց է կացվում մասնաճյուղի պրակտիկանտների շրջանում:

2.2. Հարցումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա ապրիլ-մայիս ամիսներին:

2.3. Հարցումն անցկացվում է մասնաճյուղի մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի կողմից:

2.4. Հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կից ներկայացված գնահատման հարցաթերթով (տե՛ս հավելված 1):

2.5. Հարցումն անանուն է և անց է կացվում թղթային եղանակով:

3. Հարցման արդյունքների մշակումը և պահպանումը

3.1. Հարցման արդյունքները մշակվում, վերլուծվում և պահպանվում են մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնում:

3.2. Հարցման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր հարցապնդման պատասխանի համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով, միջին քառակուսային շեղումով[1] և ստացած յուրաքանչյուր գնահատականի քանակով:

3.3. Հարցաթերթերն ունեն կարծիքների և առաջարկությունների բաժիններ, որոնց արդյունքները մշակվում և ներկայացվում են ուսումնառության բարելավմանը միտված ընդհանրացված առաջարկությունների տեսքով:

3.4. Հարցման արդյունքների մշակումն ու վերլուծությունը կատարվում է մեկամսյա ժամկետում:

3.3. Հարցաթերթում գնահատականների ուղղումները չեն հաշվարկվում:

3.4. Գնահատման հարցաթերթերը և վերլուծությունները պահվում են 5 տարի:

4. Հարցման արդյունքների օգտագործումը

4.1. Հարցման վերլուծությունները մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի վարիչը քննարկում է /ներկայացնում է/ որակի կառավարման հանձնաժողովի, ուսումնամեթոդական վարչության, մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի հետ:

4.2.ՈՒՄՎ-ն հարցման արդյունքների վերլուծությունների հիման վրա ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների հետ քննարկում և մշակում է պրակտիկայի գործընթացի բարելավմանն ուղղված առաջարկությունների փաթեթ:

[1] Միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս գնահատումների շեղման չափը միջին թվաբանականից: Որքան մեծ է միջին քառակուսային շեղումը, այնքան հարցման մասնակիցների անհատական գնահատումներն ավելի լայն տիրույթում են ցրված:

4.3. Ֆակուլտետների դեկանները մեկամսյա ժամկետում առաջարկությունների փաթեթի հիման վրա մշակում են ֆակուլտետում բարելավման գործողություններ ու միջոցառումներ և ներկայացնում ֆակուլտետի ԳԽ ի հաստատմանը, որտեղ նշվում են դրանց իրականացման ժամկետները և պատասխանատուները:

4.4. Հարցման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է մասնաճյուղի պաշտոնական կայք էջում:

5. Կարգի հաստատումը և նրանում փոփոխությունների իրականացումը

5.1. Սույն կանոնակարգը հաաստատում է մասնաճյուղի գիտական խորհուրդը:

5.2. Կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել մասնաճյուղի.

5.2.1. տնօրենի,

5.2.2. գիտական խորհրդի անդամների

5.2.2. որակի կառավարման հանձնաժողովի առաջարկությամբ՝ գիտական խորհրդի որոշմամբ:

Հավելված 1.

ԵՊՀ ԻՄ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԱԹԵՐԹ - 2015

Հարգելի՛ ուսանողներ,

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կարևորում է Ձեր կարծիքը և վստահեցնում, որ Ձեր անկեղծ և օբեկտիվ պատասխանները կօգնեն բարելավելու մասնաճյուղի կողմից կազմակերպվող պրակտիկան:

Հարցումն անանուն է, ստացված տվյալները կօգտագործվեն միայն ընդհանրացրած տեսքով:

Խնդրում եմ լրացնել հարցաթերթը և գնահատել «5» միավորանոց սանդղակով, որտեղ 5-ը ամենաբարձր, իսկ 1-ը ամենացածր գնահատականն է:

(ֆակուլտետ) (մասնագիտություն) (ուսուցման ձևը)

№	ԳՆԱՀԱՏԵՔ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ
1	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի կազմակերպման գործընթացը	[1] [2] [3] [4] [5]
2	Որքանո՞վ Ձեզ բավարարեց պրակտիկայի անցկացման վայրը	[1] [2] [3] [4] [5]
3	Որքանո՞վ է նպատակահարմար պրակտիկայի անցկացման ժամանակահատվածը	[1] [2] [3] [4] [5]
4	Որքանո՞վ է Ձեզ բավարարում պրակտիկայի տևողությունը	[1] [2] [3] [4] [5]
5	Որքանո՞վ է պրակտիկայի ծրագիրն իրականացվում	[1] [2] [3] [4] [5]
6	Որքանո՞վ Ձեզ բավարարեց ընդունող կազմակերպության աջակցությունը պրակտիկայի ընթացքում	[1] [2] [3] [4] [5]
7	Որքանո՞վ Ձեր տեսական գիտելիքները բավարարեցին ակտիվ պրակտիկայի ընթացքում	[1] [2] [3] [4] [5]
8	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը	[1] [2] [3] [4] [5]
9	Որքանո՞վ էր ուսումնառության ընթացքում յուրացրած մեթոդները նպաստում պրակտիկայի անցկացմանը	[1] [2] [3] [4] [5]
10	Որքանո՞վ պրակտիկան նպաստեց նոր մեթոդների յուրացմանը	[1] [2] [3] [4] [5]
11	Գնահատեք պրակտիկայի ղեկավարի աշխատանքները	[1] [2] [3] [4] [5]
12	Գնահատեք պրակտիկայի վայրի կողմից նշանակված ղեկավարի աշխատանքները	[1] [2] [3] [4] [5]
13	Որքա՞ն էր պրակտիկայի ղեկավարը վստահում Ձեզ	[1] [2] [3] [4] [5]
14	Գնահատեք պրակտիկայի ընթացում նոր հմտությունների և կարողությունների ձեռք բերման Ձեր ջանքերը	[1] [2] [3] [4] [5]
15	Որքանո՞վ արդարացվեցին Ձեր ակնկալիքները պրակտիկայից	[1] [2] [3] [4] [5]
16	Ի՞նչ առաջարկներ ունեք պրակտիկայի գործընթացը կազմակերպելու համար	

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար

ԵՊՀ ԻՄ-ի մասնագիտական կողմնորոշման
և պրակտիկայի կազմակերպման բաժին